«ԱՋԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ» ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գագիկ Հարությունյան

Վերջին տասը տարուց ավելի ժամանակահատվածում Վրաստանի կենտրոնական իշխանությունների և Աջարական Ինքնավար Հանրապետության հարաբերություններին բնորոշ է պարբերաբար հակամարտության հասնող լարվածություն: Վրաստանում 2003 թվականի աշնանը կատարված իշխանափոխությունը վեր հանեց այդ հանրապետությունում տեղ գտած մի շարք խնդիրներ, այդ թվում նաև «աջարական հիմնախնդիրը», և լրացուցիչ սրություն հաղորդեց դրանց: Հոդվածում ներկայացվում են 2004թ. մարտի 14-18-ը Թբիլիսիի և Բաթումի միջև ծագաց սուր հակամարտության և տեղեկատվական դաշտում «աջարական ճգնաժամ» անվանումը ստացած երևույթի ներքին սոցիալ-քաղաքական, տնտեսական և աշխարհաքաղաքական պատճառները: Քննարկվում են այդ հակամարտության ընթացքում Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Եվրամիության և Թուրքիայի մոտեցումներն ու դիրքորոշումները:

Ներածություն

Վրաստանում 2003թ. կատարված իշխանափոխությունը զգալիորեն փոխեց այդ հանրապետության ընդհանուր քաղաքական իրավիճակը: Մասնավորապես կտրուկ սրվեցին Վրաստանի կենտրոնական իշխանությունների և Աջարիայի Ինքնավար Հանրապետության ղեկավարության հարաբերությունները: Կողմերի միջև լարվածությունը գագաթնակետին հասավ 2004թ. մարտի 14-ին, երբ Վրաստանի նախագահ Սահակաշվիլուն արգելեցին մուտք գործել Աջարիա: Դրան հետևեցին վերջնագրեր և պատժամիջոցներ ինքնավարության նկատմամբ, իսկ վրաց-աջարական վարչական սահմանի երկու կողմերում էլ արձանագրվեցին զինուժի կուտակումներ: Ստեղծված ճգնաժամային իրավիճակը պայթյունալից էր և հղի վտանգով, որ Վրաստանում կարող էր սանձազերծվել նոր քաղաքացիական պատերազմ, որը կարող էր դուրս գալ ներվրացական սահմաններից և որոշ պարագաներում ապակայունացնել անվտանգության տարածաշրջանային ողջ համակարգը:

Ճգնաժամային իրավիճակների ամրագրումը և ուսումնասիրումը մեթոդոլոգիական առումով հիմնավորված են, քանի որ ծայրահեղ իրավիճակներում գործող երկրների քաղաքականությունն առավել բացահայտ է

արտահայտվում: Այդ համատեքստում կարևորություն է ստանում «Աջարական ճգնաժամի» ուղղակի և անուղղակի մասնակիցների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրամիության և Թուրքիայի մարտավարության առանձնահատկությունների քննարկումը:

Թբիլիսի-Բաթում հակամարտությունը, չնայած կողմերը մասնակի համաձայնության են եկել և լարվածությունը որոշակիորեն թուլացել է, դեռ հեռու է ավարտված լինելուց: Այսօր ընթացող զարգացումների դիտարկման արդյունքում ձևավորվում է համոզմունք, որ Թբիլիսիի և Բաթումի հարաբերություններում հիմնական իրադարձությունները դեռ առջևում են: Այս համատեքստում «Աջարական ճգնաժամի» ուսումնասիրությունը լրացուցիչ հրատապություն է ստանում, քանի որ նման հետազոտությունից բխող եզրահանգումները կարող են օգտակար լինել տարածաշրջանում ընթացող գործընթացներն ավելի հիմնավորված գնահատելու և գուցե ինչ-որ չափով կանխատեսելու գործում:

1. Թբիլիսին և ինքնավարությունները

Պաշտոնական Թբիլիսիի ներկա հարաբերությունները Աջարիայի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ հայտնի պատճառներով դժվար է բնականոն համարել: Ստեղծված իրադրությունն առանձնապես սուր են ընկալում Վրաստանի նորընտիր իշխանությունները: Նրանք իրենց քաղաքական առաջնահերթ խնդիրն են համարում վերոհիշյալ ինքնավարությունների վերամիավորումը: Չի կարելի բացառել, որ այդ գաղափարի իրականացմանն ինչ-որ չափով խանգարում է վրացական քաղաքական ընտրանու արմատավորված հիշողությունն այն պետական կառուցվածքի մասին, որը գոյություն ուներ Խորհրդային Վրաստանում:

Միևնույն ժամանակ Թբիլիսի–ինքնավարություններ հարաբերությունների բովանդակություններն էապես տարբերվում են միմյանցից: Աբխազիան և Հարավային Օսեթիան ունեն միջազգային հանրության կողմից չընդունված, բայց փաստացի անկախ պետական միավորների կարգավիճակ: Նրանք դրան հասել են Վրաստանի կենտրոնական իշխանությունների հետ զինված հակամարտության արդյունքում: Պետք է հաշվի առնել նաև աբխազների և օսերի էթնիկական տարբերությունը վրացիներից, այդ երկրամասերի և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) միջև ընդհանուր սահմանի առկայությունը՝ այստեղից բխող հայտնի հանգամանքներով: Կարելի է արձանագրել, որ վրաց-աբխազական և վրաց-օսեթական հակամարտություններն այս կամ այն չափով միջազգայնացվել են

և զգալի չափով դուրս են եկել Վրաստանի ներքին քաղաքական դաշտում գործող իրավասությունների ոլորտից: Գործոնների այս համախումբը վիճահարույց է դարձնում ցանկացած ծրագրի իրագործում, որի նպատակն է խաղաղ, ոչ ռազմական եղանակով Վրաստանին վերամիավորել Աբխազիան և Հարավային Օսեթիան [1]:

Այլ բնույթի են հարաբերությունները Աջարիայի հետ: Այդ ինքնավարության (տարածքը՝ 3 հազար քառ. կմ) բնակչության (մոտ 400 հազար մարդ) հիմնական մասը մահմեդականություն ընդունած էթնիկ վրացիներ են: Սակայն, համաձայն վկայությունների, աջարների մի մասը վրացիների հետ ինքնանույնացման հետ կապված խնդիրներ ունի: Աջարիայի Ինքնավար Հանրապետության առանձնահատկություններից են այնտեղ տեղակայված ռուսաստանյան ռազմակայանը և Թուրքիայի հետ ունցած ընդհանուր սահմանը:

Հայտնի է, որ Վրաստանի անկախություն ձեռք բերելուց ի վեր Աջարիայի ենթակայությունը կենտրոնական իշխանություններին ավելի քան սիմվոլիկ բնույթ է կրում: Սակայն Աջարիայի ղեկավարությունը երբևէ չի հայտարարել սեփական անկախության մասին: Ավելին, անգամ պաշտոնական Թբիլիսիի հետ ունեցած ամենալարված պահերին ինքնավարության Գերագույն խորհրդի անփոփոխ նախագահ Ասլան Աբաշիձեն մշտապես հավաստիացրել է, որ չի պատկերացնում Աջարիան Վրաստանից դուրս: Միևնույն ժամանակ նա բազմիցս առաջարկել է Աջարիային տալ ազատ տնտեսական շրջանի կարգավիճակ և ընդհանրապես վերափոխել Վրաստանի պետական ունիտար կառուցվածքը՝ այն դարձնելով կոնֆեդերացիա (տե՛ս, օրինակ, [2]): Ըստ Աբաշիձեի, նման մոտեցումը թույլ կտար լուծել նաև Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ կապված հիմնախնդիրները:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ինքնավարությունների հետ ունեցած հարաբերությունների անորոշության պատճառով Վրաստանի սահմանադրությունում բացակայում է տարածքային կառույցի և տարածքային միավորների մասին բաժինը[1]: Սահմանադրությունում նաև նշվում է, որ Վրաստանի պետական-տարածքային կառույցի կարգավիճակը պետք է սահմանվի սահմանադրական օրենքով՝ լիազորությունների սահմանազատման սկզբունքի հիման վրա: Այս օրենսդրական բացթողումները լրացուցիչ անորոշություններ են ստեղծում

[1] Տե՛ս www.parliament.ge/LEGAL_ACTS/CONSTITUTION/cons.html

Թբիլիսիի և Բաթումի միջև: Այսուհանդերձ, պետք է ընդգծել, որ ինքնավարությունն իրավաբանորեն գտնվում է Վրաստանի Հանրապետության իրավական դաշտում: Այս հանգամանքը խոցելի է դարձնում Ասլան Աբաշիձեի գրված ինքնուրույն պահվածքը և միևնույն ժամանակ կարծես թե հնարավորություն է ընձեռում Թբիլիսի-Բաթում հակասությունները լուծել սահմանադրական միջոցներով[2]: Վերոհիշյալ գործոնները հիմք են ծառայում Վրաստանի իշխանություններին՝ Աջարիան ինքնավարությունների շարքում դիտարկել որպես «թույլ օղակ» և երկրի միավորման ծրագիրը սկսել հենց այդ հանրապետությունից:

Վրաստանի նախորդ իշխանությունները կարծես թե համակերպվել էին Աջարիայի փաստացի անկախ կարգավիճակին: Թեև Էդ.Շևարդնաձեն և Ա.Աբաշիձեն հաճախ էին միմյանց մեղադրանքներ ներկայացնում, Թբիլիսիի և Բաթումի միջև հարաբերություններն ընդհանուր առմամբ այս կամ այն չափով կայուն բնույթ ունեին: Ավելին, 2003-ի աշնանային խորհրդարանական ընտրությունների ընթացքում ստեղծված ճգնաժամային իրավիճակում միայն Աբաշիձեն և նրա «Ժողովրդավարական վերածննդի միություն» կուսակցությունն էին, որ փորձեցին քաղաքական հենարան լինել Էդ.Շևարդնաձեին:

Իշխանափոխությունից հետո Աջարիայի ղեկավարը չընդունեց կատարվածի օրինականությունը և Թբիլիսիի նոր իշխանությունների լեգիտիմությունը: Ինքնավարության վարչական սահմանը փակվեց, իսկ հանրապետությունում փաստորեն հայտարարվեց հատուկ իրադրություն: Նշենք նաև, որ դեռ մինչ ընտրությունները ինքնավարության Գերագույն խորհուրդը որոշում էր ընդունել սեփական զինված ուժերի և նրանց գերագույն հրամանատարի մասին:

Նման դիրքորոշումը արժանացավ Վրաստանի նոր իշխանությունների և հատկապես նախագահ Միխայիլ Սահակաշվիլու խիստ քննադատությանը: Վերջինս արտահայտվում էր այն ոգով, թե Աբաշիձեի տեղը բանտն է: Հարցականի տակ էր նաև Աջարիայի մասնակցությունը Վրաստանի նախագահական ընտրություններին (տե՛ս, օրինակ, [3]): Այդ խնդիրը լուծվեց մեծ դժվարություններով, Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլսի անմիջական միջնորդությունների շնորհիվ [4]: Խորհրդանշական է, որ նորընտիր նախագահն իր երդման հանդիսություններն

[2] Նշենք, որ ճգնաժամին հետևած ժամանակաշրջանում սահմանադրական մոտիվներն աստիճանաբար սկսում են գերակայել Թբիլիսիի մարտավարությունում:

սկսեց Բաթումում ռազմածովային շքերթի ընդունումով: Հանդիսություններն ավարտվեցին նախագահի և Աբաշիձեի կողմնակիցների ընդհարմամբ:

Ավելորդ չէ նշել, որ բացի օբյեկտիվ բնույթի հակասություններից, Ասլան Աբաշիձեի և Միխայիլ Սահակաշվիլու միջև գոյություն ունեն նաև սերնդային ու աշխարհայացքային տարբերություններ: Նախկին խորհրդային պատասխանատու աշխատողը և երիտասարդ ազատական ռեֆորմատորը պետք է որ անհամատեղելի լինեն, ինչը լրացուցիչ հուզականություն է մտցնում նրանց հարաբերություններում:

Սակայն Վրաստանի ներկա իշխանությունների մոտեցումը Աջարիայի հիմնախնդրին, բացի Վրաստանի վերամիավորման նպատակից, պարունակում է նաև ներքաղաքական, տնտեսական ու աշխարհաքաղաքական գործոններ:

2. Ներքաղաքական իրադրությունը Վրաստանում

Հայտնի է, որ հեղափոխական բնույթի ցանկացած իշխանափոխություն սկզբնական շրջանում ծնում է նոր հիմնախնդիրներ երկրի, ժողովրդի և իշխանությունների համար: Վրացական հեղափոխությունն այս առումով նույնպես բացառություն չէ, և այդ հանրապետությունում, որտեղ սոցիալ-տնտեսական պայմանները բարվոք չեն, եղած դժգոհություններն աճելու միտում ունեն (տե՛ս օրինակ, [5-9]):

Իշխանափոխությունից հետո Վրաստանում իրականացվում են նախկին վարչակազմի ներկայացուցիչների և նրանց կողմից հովանավորվող գործարարների աղմկոտ ձերբակալություններ: Սակայն կալանավորված տնտեսական հանցագործներից որոշակի գումարներ կորզելուց հետո իշխանությունները նրանց ազատ են արձակում, ինչը չի կարելի հարցի լուծում համարել: Ընթանում է նաև սեփականության վերաձևում: Ստեղծված իրադրությունում պետական և հատկապես իրավապահ մարմինների աշխատակիցները փորձում են բոյկոտել իշխանության որոշումները: Գրանցվել են նաև ակտիվ դիմադրության քայլեր: Պայթեցվել է Մցխեթ-Թբիլիսի երկաթգծի մի հատվածը, Նավթլուղի կայարանում այրվել է դիզելային վառելիքով ցիստեռնը, Թելավիում փորձել են հրկիզել ԿՄԱՐԱ երիտասարդական կազմակերպության գրասենյակը: Այս ամենին զուգահեռ՝ նկատվում են որոշակի խմորումներ իշխանության եկած «եռյակում»: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ Ճգնաժամի օրերին Աբաշիձեի հետ հարաբերությունները կարողացավ կարգավորել Ն.Բուրջա-

նաձեն, ինչն էլ ավելի բարձրացրեց նրա վարկը: Իրադրության որոշ զարգացումների դեպքում «եռյակի» միջև հակասությունները կարող են և խորանալ:

Ակնհայտ է, որ ներքաղաքական զարգացումների բացասական միտումներն ընկալվում են նորընտիր նախագահի և նրա խորհրդականների կողմից: Միևնույն ժամանակ սոցիալական–տնտեսական կուտակված խնդիրների լուծումը ենթադրում է համակարգված աշխատանք երկար ժամանակահատվածում: Մինչդեռ սեփական դիրքերն ամրապնդելու և նախընտրական խոստումներին հավատարմություն ցուցաբերելու համար նոր վարչակազմը պարտավորված է հասնել շոշափելի արդյունքների կարճ ժամկետներում:

Իրադրությունը շտկելու համար անհրաժեշտ էր իրականացնել «ուժեղ քայլեր», և այդ տեսանկյունից ամենահարմարը աջարական խնդրի բարձրացումն էր: «Հնազանդեցնելով» Աջարիան կամ անգամ քաղաքական կամք ցուցաբերելով այդ խնդրին հետամուտ լինելու ուղղությամբ՝ նոր իշխանությունները կկարողանան ամրապնդել իրենց դիրքը և վարկանիշը: Միևնույն ժամանակ «Բաթումը հնազանդեցնելու» կենտրոնական իշխանությունների ձգտումը հիմնավորված է ոչ միայն ներքաղաքական իրավիճակով, այլ նաև տնտեսական գործոններով:

3. Աջարական ճգնաժամի տնտեսական նախապայմանները

Վրաստանի տնտեսական վիճակը գնահատվում է որպես ծանր: Բավական է նշել, որ հանրապետության ՀՆԱ անկման չափը 1991թ. համեմատ ավելի մեծ է (70%), իսկ աճի ցուցանիշներն անհամեմատ ցածր են (1,5%) 2001թ., քան անդրկովկասյան մյուս հանրապետություններինը [10]: Փոքր-ինչ այլ է իրավիճակը Աջարիայում, որտեղ, ըստ դիտորդների, կենսամակարդակը բարձր է միջին վրացական չափանիշներից: Այս հանգամանքը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև Բաթումի նավահանգստի անխափան և արդյունավետ աշխատանքով:

Ի տարբերություն կենտրոնական իշխանությունների վերահսկողության տակ գտնվող Փոթիի նավահանգստի, Բաթումի նավահանգիստը տեխնիկապես հագեցած է և ընթացող վերակառուցումից հետո գործնականում կարողանում է ընդունել ցանկացած տիպի և տարողության նավեր [11-13]: Այդ նավահանգիստը TRACECA տրանսպորտային միջանցքի կարևոր օղակներից մեկն է: Միայն 2003թ. Բաթումի նավահանգիստը

բարձել է 8,4 մլն տոննա բեռ (խորհրդային շրջանում ապրանքաշրջանառության ծավալը հասնում էր մինչև 12 մլն տոննայի), որի 70%-ը՝ մոտ 7 մլն տոննան, բաժին է ընկնում ադրբեջանական և ղազախական նավթին:

Բաթումի գործընկերներն են նաև Ռուսաստանի, Չինաստանի, Հայաստանի, Իրանի և Ուկրաինայի տնտեսական կառույցները: Նավթի բեռնափոխադրումով են զբաղված մի շարք ընկերություններ, սակայն հիմնական դերակատարումը պատկանում է Shell–ին: Բացի նավթից, Բաթումի նավահանգիստը կարևոր դեր է կատարում Բաքու-Ջեյհան-Թբիլիսի (ԲՋԹ) նավթամուղի շինարարությունում, քանի որ անհրաժեշտ խողովակների հիմնական մասը Ճապոնիայից ներկրվում է Բաթումի նավահանգստով:

Շահութաբեր ճանապարհային հանգույց է նաև թուրքական սահմանի վրա գտնվող Սարփի մաքսակետը (տե՛ս քարտեզը համաձայն http://velotourism.ru/gps_map/index.htm): Ընթանում է ծովեզրով անցնող Բաթում-Քոբուլետ ճանապարհի և թունելի կառուցումը, ինչն էապես կկրճատի այդ քաղաքների միջև հեռավորությունը և թույլ կտա միանալ Թուրքիայի ճանապարհային ցանցին:

Աջարիայի տարեկան եկամուտները գնահատվում են մինչև $300մլն[3]: Դրանք, ըստ վրացական աղբյուրների, չեն մուտքագրվում Վրաստանի բյուջե: Իրենց հերթին՝ աջարական աղբյուրները պնդում են, որ հարկային փոխանցումները կատարվում են, և Աջարիան չի ստանում կենտրոնից իրեն հասանելիք գումարները: Սակայն բոլոր պարագաներում կարելի է փաստել ինքնավարության արդյունավետ գործելակերպը և համավրացական տնտեսական դաշտից դուրս գտնվելը: Այս համատեքստում ինքնավարության տնտեսական մեխանիզմների վրա վերահսկողություն սահմանելը կարևոր խնդիր է Թբիլիսիի կենտրոնական իշխանությունների համար:

[3] Տարբեր աղբյուրներից քաղված և հոդվածում ներկայացված տնտեսական ցուցանիշներում պետք է հաշվի առնել համապատասխան վիճակագրական տվյալների անկատարությունը և, մասնավորապես, Աջարիայում ստվերային տնտեսության գերակայությունը:

БАТУМИ
Мцване-Концхи
МАХИНДЖАУРИ
БАТУМСКАЯ БУХТА
м.Зеленый
м.Цихисдзири
ЧАКВА
Ботанический сад
Ангиса
Ферия
Адлиа
Меджинисцкали
Ахалсопели
Чарнали
Гонио
Тхилнари
Махо
Зеда-Тхилнари
Сарпи
Кирнати
Кедкеди
Кведа-Махунцети
Зеда-Ачнева
Горгадзеевы
Чайсубани
Сахалваго
Гаятиади
Напрешумиа
Ахалшени
Зеда-Ахалшени
Махвилаури
Тодосаури
Самеба
Урехи
Кахаберн
Эрге
Квемо
Джоча
Мирдити
Мурадиди
Шачахлиспири
Аджарисаг
Чаквинта
Чаквинта
Чаквинта

Միևնույն ժամանակ Աջարիայի և, մասնավորապես, Բաթումի նավահանգստի վերահսկողության հարցն ունի նաև կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն: Ինքնավարությունը Վրաստանում ռուսաստանյան քաղաքական և ռազմական ներկայության կարևոր հենակետ է: Դա հակասության մեջ է մտնում այն ռազմավարության հետ, որը վարում է Միացյալ Նահանգները տարածաշրջանում:

4. ԱՄՆ-Ռուսաստան մրցակցությունը Վրաստանում

Հայտնի է, որ Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև գոյություն ունի շահերի գլոբալ ընդհարում (տե՛ս աշխարհաքաղաքականության դասականների, ինչպես նաև մեր ժամանակակիցների՝ մասնավորապես՝ Ալ.Դուգինի, Զ. Բժեզինսկու և այլոց աշխատությունները): Այդ տերությունների միջև տեղ գտած հակասությունների տրամաբանությունը տարածվում է նաև Հարավային Կովկասի վրա և արտահայտվում է ընթացող քաղաքական գործընթացների նկատմամբ կողմերի հակադիր պատկերացումներով (տե՛ս, օրինակ, [14, 15]): Ռուսաստանը տարածաշրջանը և Վրաստանն ընկալում է որպես իր ավանդական ազդեցության ոլորտ: ԱՄՆ-ը, որպես տարածաշրջանում համեմատաբար նոր աշխարհաքաղաքական ակտոր, ներկայում ձևավորում է իր աշխարհատնտեսական շահերը (օրինակ՝ իրագործելով ԲՋԹ ծրագիրը) և հետևողական աշխատանք է տանում Ռուսաստանին Վրաստանից «դուրս մղելու» ուղղությամբ:

Հարկ է նշել, որ Վրաստանի քաղաքական ընտրանու զգալի մասն արևմտյան կողմնորոշում ունի: Հենվելով ամերիկյան և եվրոպական գործընկերների վրա՝ վրացական կողմը շարունակաբար մեղադրում է Ռուսաստանին՝ Աբխազիային և Հարավային Օսեթիային աջակցություն ցուցաբերելու հարցում և պարբերաբար բարձրացնում հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանների խնդիրը (տե՛ս, օրինակ, [16-18]):

Իր հերթին՝ ռուսաստանյան կողմը չի դադարում մեղադրել Վրաստանին չեչեն գրոհայիններին ապաստան տալու, ԱՄՆ զինծառայողների ընդունման և ՆԱՏՕ–ին ինտեգրվելու ցանկություն ունենալու հարցում (տե՛ս, օրինակ, [19]): Ուշագրավ է նաև այն փաստը, որ այսօր Վրաստանում գտնվող ռուսաստանյան ռազմակայանները տեղակայված են Աջարիայում (12-րդ ռազմակայանը) և հայաբնակ Ջավախքում (62-րդ ռազմակայանը), այսինքն՝ այս կամ այն չափի ինքնուրույնություն ունեցող շրջաններում, որոնց բնակչությունը դրական վերաբերմունք ունի ռուսաստանյան զինվորականության հանդեպ: Ընդհանուր առմամբ, ռուսաստանյան ռազմակայաններում կենտրոնացված են մոտ 8 հազար զինծա-

ռայող, 150 տանկ, 240 զրահապատ մեքենա և 140 հրետանային համակարգ:

ՌԴ-ԱՄՆ մրցակցությունը Վրաստանում սուր բնույթ է ընդունել, որի հետևանքով այնտեղ ընթացող քաղաքական գործընթացներն ավելի, քան տարածաշրջանի այլ երկրներում, պայմանավորված են դրանց նկատմամբ ՌԴ և ԱՄՆ ունեցած մոտեցումներով [20]: Մասնավորապես, Էդ. Շևարդնաձեի՝ ԱՄՆ հովանավորությունից զրկվելը և հետագա պաշտոնաթողությունը կապում են նրա կողմից ռուսաստանյան էներգետիկ ընկերություններին նախապատվություն տալու հետ [21]: Համարվում է նաև, որ ԱՄՆ այս մոտեցումն ամրապնդվեց Շևարդնաձեի և ռուսաստանյան կողմնորոշում ունեցող Աբաշիձեի դաշինք կազմելուց հետո [22-24]: Հայտնի է նաև այն դերակատարումը, որ ունեցել են ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլսը և միլիարդատեր Ջորջ Սորոսը 2003թ. աշնանը կատարված իշխանափոխությունում [25-28]: Միլիարդատիրոջ դերն ավելի քան ուշագրավ է: Միջազգային պրակտիկայում հազվադեպ է պատահում, երբ օտարերկրացի անհատն այդքան էական դեր է կատարում ինքնիշխան պետությունում (ընդհուպ մինչև կառավարությանը և պետական ծառայողներին աշխատավարձ վճարելը): Նշենք նաև, որ Սորոսի ինքնուրույն գործելակերպը փոքր-ինչ չափազանցված է, և նրա քայլերը ֆինանսատեղեկատվական և գաղափարատեղեկատվական ոլորտում համահունչ են ԱՄՆ քաղաքականությանը [26, 27]:

Վրաստանը, փաստորեն, այն հանրապետությունն է, որտեղ ԱՄՆ-ը հաջողությամբ ներդրել է հայեցակարգային բնույթի «պերմանենտ հեղափոխության» քաղաքական տեխնոլոգիան: Այն նաև ենթադրում է հեղափոխության արտահանում այլ երկրներ, մասնավորապես՝ Հայաստան: Այդ հայեցակարգը և նրա կիրառումը կապում են, այսպես կոչված, «նեոկոնսերվատորների» հետ, որոնք Բուշի վարչակազմում օժտված են մեծ ազդեցությամբ [28-32]: Այս ամենի առիթով նշենք նաև, որ որոշ վերլուծաբանների կարծիքով՝ ամերիկյան քաղաքականության ռազմավարական գծի հիմնական վարողը Վրաստանում ոչ թե Միխայիլ Սահակաշվիլին է, այլ վարչապետ Զուրաբ Ժվանիան [33, 34]:

Ներկայում ԱՄՆ-ը Վրաստանը համարում է իր ռազմավարական գործընկերը: Նախատեսվում է, որ 2004թ. ԱՄՆ-ը կարող է այդ հանրապետությանը, որպես օգնություն, տրամադրել մինչև $200 մլն [35]: ԱՄՆ-ը և Վրաստանը մշակել են նաև ռազմական ոլորտում համագործակցության

հնգամյա ծրագիր, որը շարունակելու է մինչև 2004թ. գարուն արդեն գործող $64 մլն արժողության ծրագիրը[4]:

Վրաց-ամերիկյան հարաբերությունների և այդ համատեքստում ԱՄՆ -ՌԴ մրցակցության տեսանկյունից թերևս շրջադարձային էին ԱՄՆ Պետդեպարտամենտի քարտուղար Քոլին Փաուելի՝ Մոսկվայում (ուր նա մեկնել էր Մ.Սահակաշվիլու նախագահական երդման արարողությունից հետո) ՌԴ-ի դեմ արած չափազանց կոշտ հայտարարությունները [36]: Մասնավորապես ասվեց Վրաստանից ռուսաստանյան ռազմականների տեղահանման անհրաժեշտության, ՌԴ-ում ժողովրդավարության պակասի և Չեչնիայում մարդու իրավունքների խախտման մասին: Փաուելը ընդգծեց, որ հարգելով Ռուսաստանի հարաբերություններն իր հարևանների հետ՝ ԱՄՆ-ը իրեն նույնպես իրավունք է վերապահում այդ երկրների հետ հարաբերություններ կառուցել և հոգալ նրանց անկախության մասին: Փաուելը հայտարարեց նաև, որ ԱՄՆ-ը, իր հերթին, չի պատրաստվում ռազմական ստեղծել Վրաստանում:

Վերջինիս առիթով հարկ է նշել, որ իր զինված ուժերի (ԶՈՒ) նոր հայեցակարգի համաձայն, ԱՄՆ-ը հակված է հրաժարվել մշտական խոշոր ռազմականներ ստեղծելու գաղափարից: Նման մոտեցումը պայմանավորված է գլոբալ ռազմավարություն վարելու անհրաժեշտությամբ, ինչի հետևանքով ամերիկյան սահմանափակ ԶՈՒ-ն ստիպված են սփռվել ողջ աշխարհով մեկ [37, 38]: Համաձայն նոր հայեցակարգի՝ մշտական ռազմականների փոխարեն աշխարհաքաղաքական կարևորություն ունեցող շրջաններում ամերիկացիները ստեղծում են համապատասխան՝ գլխավորապես ռազմաօդային բնույթի, ենթակառուցվածք: Դա անհրաժեշտ պահին թույլ կտա օպերատիվ կերպով այդ շրջան հասցնել մոբիլ զինված ստորաբաժանումներ: Սակայն մշտապես չօգտագործվող ենթակառուցվածքը և միայն անհրաժեշտ պահին հայտնվող ստորաբաժանումների համախումբը կարելի է և չորակել որպես ռազմական: Այսպիսով՝ Փաուելի հայտարարությունը Վրաստանում ԱՄՆ ԶՈՒ չտեղադրելու վերաբերյալ երկիմաստություն է պարունակում: Վերը համառոտ նկարագրված՝ «Նոր սառը պատերազմի» տրամաբանությանը ենթարկվող զարգացումներն ուրվագծում են այն մրցակցությունը, որ առկա է ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև Վրաստանում [39]:

Այսպիսով, Թբիլիսի-Բաթում հարաբերությունների սրումը, բացի ներքաղաքական և տնտեսական պատճառներից, ունի նաև աշխարհա-

[4] Ընդհանուր առմամբ, նկատվում է նույնիսկ որոշակի մրցակցություն ԱՄՆ և եվրոպական երկրների միջև Վրաստանի նոր իշխանություններին ֆինանսական օգնություն ցուցաբերելու հարցում:

քաղաքական հիմնավորում: ԱՄՆ-ի կողմից դա Ռուսաստանի ազդեցության ոլորտից Աջարիան դուրս բերելու ցանկությունն է: Այս հնարավոր ծրագրերը պետք է հանդիպեին Ռուսաստանի դիմադրությանը:

5. «Աջարական ճգնաժամ»

Ելնելով Վրաստանում քաղաքական զարգացումների տրամաբանությունից՝ պետք էր սպասել, որ Թբիլիսիի իշխանությունները կընտրեն «աջարական անջատողականության» հարցի լուծման «հեղափոխության արտահանման» տարբերակը: Ինչպես արդեն նշել ենք առաջին ենթագլխում, նախագահական երդման արարողությունը Մ.Սահակաշվիլին ցուցադրաբար սկսեց Բաթումում նավատորմի շքահանդեսով, և նույն օրն էլ նրա կողմնակիցները անկարգություններ հրահրեցին: Պետք էր սպասել, որ Ա.Աբաշիձեի նկատմամբ ճնշումները սաստկանալու և ընդունելու են ինքնավարությունում քաղաքացիական անհնազանդության տեսք:

Այդ նպատակով, ի լրումն Բաթումում գործող՝ Ա.Աբաշիձեին ընդդիմադիր «Մեր Աջարիա» կուսակցության, Թբիլիսիում փետրվարին հիմնադրվեց «Ժողովրդավարական Աջարիա» հասարակական-քաղաքական կազմակերպությունը՝ խորհրդարանի նախկին փոխխոսնակ Էդվարդ Սուրմանիձեի գլխավորությամբ: Կազմակերպության հիմնական նպատակը սահմանադրական ճանապարհով Աջարիայի ղեկավարությունը փոխելն է:

Ի պատասխան Թբիլիսիի քայլերի՝ Ա.Աբաշիձեն զինում է իր կողմնակիցներին և խստացնում ինքնավարության սահմանի պաշտպանությունը: Կողմերը միմյանց դեմ սկսում են վարել տեղեկատվական պատերազմ և փոխանակում են սպառնալիքներ՝ դիմելով միջազգային հանրությանը: Թբիլիսիի և Բաթումի հարաբերությունների հետագա սրացման վերլուծաբանները [1] սպասում էին մարտին, խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, ինչը և տեղի ունեցավ:

Արդեն մարտի 12-13-ին Աբաշիձեն հանդես է գալիս հայտարարություններով, թե Թբիլիսին պատրաստվում է ռազմական միջոցներով իշխանափոխություն կատարել ինքնավարությունում: Մարտի 14-ի լույս գիշերվա ժամը 4-ին, թերևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Աբաշիձեն գտնվում է Մոսկվայում, Մ.Սահակաշվիլին մոտ հարյուր զինված թիկնազորով փորձում է մտնել Աջարիա: Ինքնավարության վարչական սահմանի՝ Չոլոքի գետի կամրջի վրա նրան կանգնեցնում է աջարա-

կան զինված պահակախումբը և արգելում մուտք գործել ինքնավարություն:

Ի պատասխան՝ վրացական զինված ուժերում հայտարարվում է բարձր պատրաստվածություն, փակվում է ինքնավարության օդային տարածքը: Մ.Սահակաշվիլին վերջնագիր է ներկայացնում Աջարիայի իշխանություններին, որում պահանջում է՝ ինքնավարությունում ազատ տեղաշարժվելու հնարավորություն, քաղաքական հետապնդումների արգելում, անօրինական զինված միավորումների զինաթափում և մարտի 28-ի խորհրդարանական ընտրությունների անցկացման երաշխիքներ: Այդ պայմանները 24 ժամվա ընթացքում չկատարելու դեպքում Վրաստանի իշխանությունները սպառնում են պատժամիջոցներ կիրառել Աջարիայի դեմ:

Աբաշիձեն մերժում է ներկայացված վերջնագիրը և օդային ճանապարհով վերադառնում Բաթում: Վրաստանի իշխանությունները պատժամիջոցներ են մտցնում: Շրջափակման են ենթարկվում Բաթումի նավահանգիստը և Աջարիայի օդային տարածքը, արգելվում է շարժումը Սարփիի մաքսակետով, սառեցվում են Աջարիային պատկանող բանկային հաշիվները և արտոնագրերից զրկվում են Աջարիայում գործող բանկերը: «Վրաստանի տարածքային ամբողջականությունը խախտելու փորձ կատարելու» մեղադրանքով Վրաստանի դատախազությունը քրեական գործեր է հարուցում Աջարիայի պետանվտանգության նախարարի և այլոց նկատմամբ: Երկու կողմերն էլ հանդես են գալիս միջազգային հանրությանն ուղղված հայտարարություններով:

Շրջանցելով շրջափակումը՝ Թուրքիայից Սարփիի սահմանակետով Բաթում է ժամանում Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը: Մարտի 18-ին խաղաղարարական առաքելությամբ Բաթում է այցելում Իտալիայում իր այցն ընդհատած Վրաստանի խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեն: Նրա և Ա.Աբաշիձեի բանակցությունների արդյունքում համաձայնություններ են ձեռք բերվում Սահակաշվիլի-Աբաշիձե հանդիպման վերաբերյալ: Հաջորդ օրը Բաթում է ժամանում նախագահ Սահակաշվիլին: Կողմերը գալիս են մասնակի փոխհամաձայնության, և ինքնավարության դեմ ուղղված պատժամիջոցները հանվում են [40-43]:

Ճգնաժամի հետևանքով առաջացած ընդհանուր վնասները գնահատվում են մի քանի միլիոն դոլար: Գրանցվեցին նաև բարդություններ Վրաստանի տարածքով անցնող Հայաստանի բեռնափոխադրումների առումով:

Բանակցությունների արդյունքում լուծվում են որոշ քաղաքական (կապված խորհրդարանական ընտրությունների հետ) և տնտեսական հարցեր (մասամբ կարգավորվում են մաքսային և այլ բնույթի հարկերի մուտքերը պետբյուջե, Աջարիայում ներդրվում է Վրաստանի նախագահի ներկայացուցիչների ինստիտուտը):

Սակայն բաց են մնում Աջարիայի՝ Վրաստանի կենտրոնական ղեկավարությանը ենթարկվելու և աջարական զինված միավորումների զինաթափման հարցերը: Այս հանգամանքները պայմանավորում են Թբիլիսի-Բաթում հակամարտության շարունակությունը ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածում:

6. Ռուսաստանի դիրքորոշումը

Վերլուծաբանական հանրության մի մասը, ելնելով նախկինում նման իրադրություններում Ռուսաստանի ղեկավարության պահելաձևից, համոզված չէր, որ ռուսաստանյան կողմը ճգնաժամային իրավիճակում սատար կկանգնի Ա.Աբաշիձեին: Սակայն իրադարձությունները զարգացան այլ հունով: Ռուսաստանի ԱԳՆ-ն հանդես եկավ բավական կտրուկ հայտարարություններով, որոնցում իրադարձությունների հետագա զարգացումների պատասխանատվությունը դրեց վրացական կողմի վրա: Ուշագրավ է, որ ռուսաստանյան պաշտոնական անձինք բազմիցս շեշտել են, թե 12-րդ ռազմակայանը չի միջամտելու հակամարտության ընթացքին: Սակայն դեռևս մինչ ճգնաժամը տեղեկատվական դաշտում հայտնվեցին հաղորդագրություններ, համաձայն որոնց Բաթումի ռազմակայան էին տեղափոխվել լրացուցիչ ուժեր: Երբ Վրաստանի ռազմածովային ուժերը հայտնվեցին Բաթումի նավահանգստի ջրերում, «նախապես պլանավորված» զինավարժությունների անվան տակ ռազմակայանի հրետանին փոխադրվեց ծովափ և ցուցադրաբար կրակ բացեց բաց ծովի ուղղությամբ (տե՛ս, օրինակ, [44, 34]):

Հատկանշական է, որ ռուսաստանյան իշխանությունների ազդեցության տակ գտնվող ԶԼՄ-ը ճգնաժամի օրերին ցուցաբերեցին միանշանակորեն բացասական դիրքորոշում վրացական իշխանություններ նկատմամբ: Տեղեկատվական դաշտում հայտնվեցին նաև Կարսի 1921թ. Պայմանագրի քննարկումները, համաձայն որի՝ Ռուսաստանը Աջարիայի ինքնավարության երաշխավորներից է [45]: Յուրի Լուժկովի այցը Բաթում ընդգծեց Ռուսաստանի՝ հակամարտությունում շահագրգիռ կողմ լինելու կարգավիճակը: Այս ամենը վկայում է, որ պաշտոնական Մոսկվայի մոտեցումները բավական հստակ են:

Տեղեկատվական հոսքերից ձևավորված ընդհանուր, սակայն ուղղակի փաստերով չամրապնդված տպավորությունն այն է, թե ճգնաժամի առաջին փուլում Ռուսաստանը գուցեն դեմ չէր ճգնաժամային իրավիճակի ուժային զարգացումներին, որոնց պարագայում նա կարող էր զգալիորեն աջակցել աջարական զինված միավորումներին: Վրացական զինուժի պատրաստվածության աստիճանը բավական ցածր է գնահատվում, և պատերազմական իրավիճակում Թբիլիսիի կենտրոնական իշխանությունների ռազմական պարտությունը չէր կարելի բացառել: Իր հերթին՝ «աջարական ճակատում» ռազմական պարտությունը կարող էր էապես հեղինակազրկել Մ.Սահակաշվիլու վարչակազմը և ամրապնդել Ռուսաստանի դիրքերը Վրաստանում ու ընդհանրապես տարածաշրջանում: Միևնույն ժամանակ Ռուսաստանը Վրաստանում քաղաքական լուրջ հենարաններ չունի, ինչն անկանխատեսելի է դարձնում ուժային զարգացումների հետևանքները:

Պետք է փաստել, որ «Աջարական ճգնաժամի» ընթացքում ՌԴ վարած քաղաքականությունը համապատասխան էր իրավիճակային զարգացումներին: Ռուսաստանը ցուցադրեց իր կարևորությունը տարածաշրջանային անվտանգության համակարգում և ինչ-որ չափով վերականգնեց «վրացական հեղափոխությունից» հետո բավական տուժած հեղինակությունը:

7. Միացյալ Նահանգների մոտեցումները և եվրոպական գործոնը

Տեղեկատվական դաշտում «Աջարական ճգնաժամի» օրերին ԱՄՆ մոտեցումները քիչ են լուսաբանվել: Հատկանշական է, որ Թբիլիսի-Բաթում հակամարտությունը պաշտոնապես արծարծվեց միայն մարտի 15-ի Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցչի տեղակալ Ադամ Էրելիի[5] մամուլի ասուլիսի ժամանակ [46]: Վերջինս հայտնել է, որ Քոլին Փաուելը հեռախոսազրույց է ունեցել Միխայիլ Սահակաշվիլու հետ և կոչ է արել վերջինիս չմեծացնել լարվածությունը: Էրելին նաև հայտնել է Փաուելի և ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովի միջև կայացած հեռախոսազրույցի մասին:

[5] Ներկայացուցչական այս ոչ այնքան բարձր մակարդակը գուցեն թելադրված էր ցանկությամբ՝ ցուցադրել (գուցեն արտաքնապես), որ ԱՄՆ-ի համար հարցը մեծ կարևորություն չունի:

Համաձայն մեկ այլ տեղեկատվության՝ պաշտոնական հրավերով Վաշինգտոնում գտնվող Ա.Աբաշիձեի «Վերածնունդ» կուսակցության Թբիլիսիի կազմակերպության ղեկավար Բակուրիան հայտնել է, որ Պետդեպարտամենտը մասնավորապես դիմել է Վրաստանի իշխանություններին, որպեսզի նրանք հարձակողական քայլեր չձեռնարկեն Աջարիայի դեմ, քանի որ դա կհանգեցնի նրանց հեղինակազրկմանը [47]: Նկատենք նաև, որ ԱՄՆ դեսպան Մայլսի այցը Փոթի (որտեղ գտնվում էր Վրաստանի նախագահը ճգնաժամի օրերին) նույնպես չմեկնաբանվեց ըստ արժանվույն: Տեղեկատվական դաշտում միայն հայտնվեցին նրա խոսքերը, թե «նա չգիտի ինչ անել Աջարիայում ստեղծված ճգնաժամի հետ» [48]: Նշենք նաև, որ *CNN, EuroNews* հեռուստակայանները և արևմտյան մամուլը համեմատաբար սակավ էին անդրադառնում «Աջարական ճգնաժամին», իսկ որոշ դեպքերում Սահակաշվիլու գործողությունները լուսաբանում էին բացասական երանգներով (տե՛ս, օրինակ, [49]):

Այս ամենը թույլ է տալիս մտածել, որ ԱՄՆ համապատասխան գերատեսչությունները, թերևս, հակված չէին տեղեկատվական դաշտում մեծ տեղ հատկացնել Թբիլիսի-Բաթում հակամարտության լուսաբանմանը: Մինչդեռ հայտնի է, որ ռազմաքաղաքական հարցերի լուծման համար ԱՄՆ-ը լայնորեն օգտագործում է իր տեղեկատվական հնարավորությունները: Օրինակ՝ 2003թ. աշնանը վրացական հեղափոխության զարգացումներում մեծ դեր կատարեցին, այսպես կոչված, on line տեղեկատվական հաղորդումները:

Եթե տեղեկատվական գործոնն ընդունենք որպես հիմք, ապա ԱՄՆ մարտավարությունը «Աջարական ճգնաժամի» օրերին մեկնաբանելու համար կարելի է առաջարկել նվազագույնը երկու տարբերակ.

1. Չնայած իշխող այն կարծիքին, որ վրացական նոր իշխանություններն իրենց քայլերը մանրամասնորեն համաձայնեցնում են ամերիկյան դաշնակիցների հետ, մարտի 14-ին Մ.Սահակաշվիլու Բաթում «ներխուժելու» մտադրությունը գուցեև ինքնուրույն քայլ էր: Բացառված չէ, որ այն թելադրված էր ներվրացական հրամայականներով և Մ.Սահակաշվիլու խառնվածքի առանձնահատկություններով: Նման սցենարի դեպքում ԱՄՆ դերակատարումը հանգել է նրան, ինչ մենք տեսնում ենք բաց տեղեկատվական դաշտում, այն է՝ ճգնաժամում ներքաշված բոլոր կողմերի հետ բանակցություններ վարելով՝ մեղմել իրավիճակը և թույլ չտալ, որ հակամարտությունը վերաճել զինված բախումների: Նման մոտեցման հիմքում ընկած է Թբիլիսիի և Բաթումի միջև հնարավոր պատերազմական գործողու-

թյունների հետևանքների անորոշությունը: Դա նաև ենթադրում է, որ ամերիկյան տարածաշրջանային ռազմավարությունը ներկայում ուղղված է հարաբերական կայունության պահպանմանը և ռազմական գործողությունների բացառմանը:

2. Համաձայն երկրորդ տարբերակի՝ Մ.Սահակաշվիլու եռանդուն քայլերը Բաթումի դեմ մասն են կազմում ԱՄՆ-ի կողմից մշակված մի բազմափուլ սցենարի, որի նպատակներն առաջին փուլում կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. վեր հանել, հրատապ դարձնել Բաթումի հետ գոյություն ունեցող հակասությունների համախումբը, խարխլել Ա.Աբաշիձեի դիրքերը, պարզել ճգնաժամային իրավիճակում հակամարտության մեջ ներքաշված կողմերի, առաջին հերթին՝ Ռուսաստանի պատասխան գործողությունները և հնարավորությունները հակամարտության տարբեր զարգացումների պարագայում: Առաջին փուլում իրագործված քայլերը նույնպես չեն ենթադրում ռազմական գործողություններ՝ դրանց հետևանքների անորոշության պատճառով: Ներկայացված վարկածը մոտ է այն հարձակողական տրամաբանությանը, որը կիրառում է ԱՄՆ-ը Վրաստանում: Միևնույն ժամանակ նման մարտավարությունը ենթադրում է ԱՄՆ տարածաշրջանային ռազմավարության ավելի լայն մեկնաբանում, քան դա ներկայացված է առաջին կետում:

Բոլոր դեպքերում ԱՄՆ-ը այս փուլում ձգտել է խուսափել ռազմական ընդհարումներից: Առաջին պատճառը, ինչպես արդեն նշել ենք, պատերազմական գործողությունների անկանխատեսելիությունն է: Անհաջողության դեպքում կասկածի տակ կդրվեն վրացական նոր իշխանությունների հեղինակությունը և երկարակեցությունը: Միևնույն ժամանակ պատերազմական գործողություններում կարող են ներգրավվել նաև այլ ուժեր, և գործընթացը կարող է դուրս գալ լոկալ հակամարտության սահմաններից, ինչին նույնպես ԱՄՆ-ը թվում է թե պատրաստ չէ:

Ճգնաժամային զարգացումներում մասնակցություն ունեցան նաև եվրոպական կառույցները: Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Վալտեր Շվիմերն այցելեց Բաթում և Աբաշիձեին ներկայացրեց Վրաստանի կառավարության պայմանները: Նա հայտարարեց, որ «գտնվում է վրացական կառավարության տրամադրության տակ» [50, 51]:

Այսօր ամեն ինչ խոսում է այն մասին, որ եվրոպական ազդեցությունը տարածաշրջանում աճելու հստակ միտումներ ունի: Նկատվում է, որ ԱՄՆ-Եվրոպա մրցակցության բաղադրիչները, որոնք նախկինում տարա-

ծաշրջանում այնքան էլ հստակ չէին ուրվագծվում, այժմ ավելի ակնառու են դարձել: Միևնույն ժամանակ եվրոպական առաջատար երկրների աշխարհաքաղաքական շահերը տարածաշրջանում դեռ չեն բյուրեղացել և հստակ ուղղվածություն ձեռք չեն բերել: Այս առումով ԵՄ մոտեցումներից խիստ տարբերվում է Թուրքիայի ռազմավարությունը, որը տարածաշրջանում կարևոր (եթե ոչ առաջնային) ազդեցություն և դերակատարություն ունենալու հավակնություններ ունի:

8. Կարսի պայմանագիրը, Թուրքիայի հավակնությունները և Ադրբեջանի դիրքորոշումը

Թուրքիայի աշխարհաքաղաքական ձգտումները Հարավային Կովկասում պատմական-ավանդական բնույթ ունեն: Մասնավորապես՝ Աջարիան պատմական մի ժամանակահատվածում եղել է Թուրքիայի տիրապետության տակ: Տարածաշրջանի հանրապետությունների անկախացումից հետո Թուրքիայի հավակնությունները նոր լիցք են ստացել [52-54]: Մահմեդական բնակչություն ունեցող Աջարիան տեխնիկապես հագեցած նավահանգստով արժեք է ներկայացնում Թուրքիայի համար նաև աշխարհատնտեսության առումով:

Հարկ է նշել, որ տարածաշրջանային «բազմաբևեռության» պայմաններում Ասլան Աբաշիձեն վարում է հավասարակշռված քաղաքականություն: Նա հենվում է ոչ միայն Ռուսաստանի կամ որոշ պարագաներում նաև ԱՄՆ-ի վրա, այլ նաև համագործակցում է Թուրքիայի հետ՝ տնտեսական և քաղաքական ոլորտներում: Բնորոշ է, որ ճգնաժամի օրերին հաղորդագրություններ եղան, թե աջարները Թուրքիայում մեծ քանակությամբ զենք են ձեռք բերում:

Հատկանշական է, որ «Աջարական ճգնաժամի» օրերին տեղեկատվական շրջանառության մեջ դրվեց Կարսի 1921թ. պայմանագիրը, համաձայն որի՝ Աջարիայի ինքնավարության երաշխավորներից մեկը Թուրքիան է: Առաջիններից մեկը, որ հիշատակեց այդ պայմանագիրը, Թուրքիայի ԱԳ նախարար Աբդուլա Գյուլն էր [55]: Վրաստանի վարչապետ Ժվանիայի հետ ունեցած հեռախոսազրույցում թուրքական նախարարը շեշտել է Աջարիայի հատուկ կարգավիճակը Վրաստանի կազմում և ինքնավարության հատուկ նշանակությունը Թուրքիայի համար: Այդպիսով փաստորեն աջակցություն է ցուցաբերվել Ա.Աբաշիձեին:

Ա.Գյուլի դիվանագիտական քայլերին հետևեց Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Ունալ Չևիկոզի հարձակողական բնույթի հայտարարու-

թյունը [56]: Ըստ դեսպանի՝ Կարսի 1921թ. պայմանագիրը Թուրքիային իրավունք է տալիս զորքեր մտցնել Աջարիա: «Ես կարծում եմ, որ բացատրությունների անհրաժեշտություն չկա: Ուղղակի պայմանագիրը մնում է ուժի մեջ»,- ավելացրել է դիվանագետը: Չսահմանափակվելով հայտարարություններով՝ թուրքական կողմը Վրաստան գործուղեց մի պատվիրակություն, որը գլխավորում էին վարչապետ Էրդողանի անձնական ներկայացուցիչներ, նախկին ԱԳ նախարար Յաշար Յակիշը և նախկին պետական նախարար Ռեֆահիդին Շահինը: Թբիլիսիից հետո պատվիրակությունը մեկնեց Բաթում:

Դիվանագիտական այս դեմարշները ստիպեցին ՌԴ-ում Վրաստանի դեսպան Կոնստանտին Կեմալուրիային Կարսի պայմանագրի կապակցությամբ հայտարարել, թե «ներկայում ստեղծվել է այլ քաղաքական իրավիճակ, այլ են հարաբերությունները Թուրքիայի և Ռուսաստանի, Վրաստանի և Թուրքիայի, ինչպես նաև Վրաստանի և Ռուսաստանի միջև, ինչը թույլ չի տալիս ռազմական միջամտություն կատարել (նկատի ունի Թուրքիային- Գ.Հ.)» [56]:

«Աջարական ճգնաժամի» օրերին բավական երկիմաստ էր նաև Ադրբեջանի դիրքորոշումը: Իլհամ Ալիևը որևէ հայտարարություն հօգուտ Վրաստանի կենտրոնական իշխանությունների չկատարեց: Համաձայն տարածաշրջանային որոշ վերլուծաբանների՝ Ադրբեջանի ղեկավարությունը որոշ հարցերում նույնիսկ աջակցել է Աբաշիձեին: Այս ամենը հիմք է տալիս կարծելու, որ Աջարիայի խնդրում Ադրբեջանի և Թուրքիայի դիրքորոշումները կարող են և համաձայնեցված լինել միմյանց հետ:

Հետևություններ

- 2004թ. մարտին ծագած «Աջարական ճգնաժամը» օբյեկտիվ քաղաքական և տնտեսական զարգացումների արդյունք էր: Այն թելադրված էր Վրաստանում 2003թ. իշխանափոխությունից հետո ստեղծված տնտեսական և ներքաղաքական իրավիճակով:
- Թբիլիսիի և Բաթումի միջև հակամարտությունը պայմանավորված է նաև աշխարհաքաղաքական մրցակցությամբ, որում պետք է կարևորել ԱՄՆ և ՌԴ տարածաշրջանային շահերի հակասությունները: Այդ տերությունների՝ ճգնաժամի օրերին վարած քաղաքականությունը բազմապլան էր և տարբեր մեկնությունների առիթ է տալիս: Միևնույն ժամանակ կարելի է պնդել, որ ներկա փուլում Ռուսաստանը և ԱՄՆ-ը շահագրգռված չեն Թբիլիսիի և Բաթումի հակամարտությունը տեղափոխել ռազմական ընդհարումների ոլորտ: Մարտավարական հա-

մատեքստում նրանց այդ համընկնող մոտեցումները տարաբնույթ հիմնավորումներ ունեն: Սակայն ռազմավարական հեռանկարում կողմերը թերևս համակարծիք են այն դրույթի հետ, որ պատերազմական գործողությունների ծավալումը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ տարածաշրջանային անվտանգության ողջ համակարգի վրա: Միևնույն ժամանակ աջարական հիմնախնդրի շուրջ «պատերազմի և խաղաղության եզրով» ընթացող զարգացումները միշտ հղի են զինված բախումների հնարավորություններով:

- Ապակայունացնելով և սրելով իրադրությունը՝ վրացական կենտրոնական իշխանություններին հաջողվեց լուծել Աջարական ինքնավարության հետ կապված որոշ քաղաքական և տնտեսական հարցեր: Սակայն լուծում չստացավ աջարական զինված միավորումների հիմնախնդիրը, և ինքնավարությունը առայժմ պահպանեց իր ինքնուրույն և կիսաանկախ կարգավիճակը: Որպես հետևանք՝ Թբիլիսիի և Բաթումի միջև հակամարտությունը շարունակական բնույթ է ստացել և այդ խնդրի հիմնական զարգացումները առջևում են:
- Իրադրության սրման հետևանքով Աջարիայի հիմնախնդիրը միջազգայնացվեց և դադարեց լինել Վրաստանի ներքին հարց: Թբիլիսի-Բաթում հակամարտությունում այս կամ այն չափով ներքաշվել են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Եվրամիությունը և Թուրքիան: Այդ երկրներից յուրաքանչյուրը աջարական հարցի լուծումները յուրովի է պատկերացնում:
- Ուշագրավ է այն փաստը, որ Թուրքիան, լինելով ԱՄՆ մերձավոր դաշնակիցներից մեկը, ճգնաժամի օրերին հենվելով Կարսի 1921թ. պայմանագրի դրույթների վրա, բացահայտորեն հայտնեց Աջարիայի հանդեպ իր իրավունքների մասին: Այդ մոտեցումը չի համընկնում ԱՄՆ՝ տարածաշրջանում վարած ռազմավարությանը: Թուրքական ռազմավարությունն իր բնույթով հիշեցնում է Հյուսիսային Քուրդիստանի հարցում Թուրքիայի և ԱՄՆ-ի մոտեցումների տարբերությունները և հակասությունները: Ճգնաժամի ժամանակահատվածում երկիմաստ պահվածք ցուցաբերեց նաև Ադրբեջանի ղեկավարությունը: Բացառված չէ, որ Թուրքիան և Ադրբեջանը աջարական հարցի վերաբերյալ ունեն համաձայնեցված մոտեցումներ:

Հավելված

Վրաստանի զինված ուժերը (տե՛ս [57-62])

Վրացական բանակի պաշտոնական թվաքանակը 26 հազար է: Բանակի կազմում կա 79 տանկ (Т-55 և Т-72), 111 զրահամեքենա (БТР-70 և БТР-80, ինչպես նաև БМП-1 և БМП-2), 92 հրանոթ, այդ թվում 120մմ ականանետեր: Բացի ցամաքային զորամիավորումներից, գոյություն ունեն ռազմաօդային, ռազմածովային և հակաօդային ուժեր: Ռազմաօդային ուժերը բաղկացած են Су-25 գրոհային ինքնաթիռներից, Ми-24 ռազմական ուղղաթիռներից և L-29 ուսումնամարզական ինքնաթիռներից:

«Ուսուցում և սպառազինում» ծրագրի սահմաններում, որի ծախսերը կազմել են $64 մլն., ամերիկյան հրահանգիչները պատրաստել են պայմանագրային ծառայության երեք գումարտակ. Վազիանիում տեղաբաշխված 11-րդ մոտոհրաձգային բրիգադի 113-րդ «Շավանաբադի» գումարտակը, ծովային հետևակի «Կոմանդոս» 1 գումարտակը, որը տեղակայված է Փոթիում, ևս 1 գումարտակ տեղաբաշխված է Արևմտյան Վրաստանում, 16-րդ «Սիչխերյան» լեռնային հրաձիգների բրիգադի կազմում: Ներկայում ամերիկյան հրահանգիչները սկսել են նախապատրաստել 4-րդ գումարտակը Թելավիի 111-րդ տանկային գումարտակի հիման վրա:

Ռազմածովային ուժերում կան մի քանի ռազմանավակներ և մի պահականավ: Լրատվական դաշտում հայտնվել են տեղեկություններ այն մասին, որ Հունաստանը Վրաստանին է հանձնելու մեկ հածանավ: Միևնույն պարագայում, համաձայն [38]-ի՝ Հունաստանի ռազմածովային ուժերում հածանավեր չկան և խոշոր նավերի վերաբերյալ խոսքը կարող է գնալ էսկադրային ականակրի կամ ֆրեգատի մասին: Բացառված չէ, որ «հածանավ» անվանումը տեղեկատվական շրջանառության մեջ է դրվել կա՛մ ռազմածովային դարձվածաբանությունում տիրող շփոթի պատճառով, կա՛մ հոգեբանական ազդեցության նպատակով:

Աջարիայի զինված ուժերի մասին տվյալները հասկանալի պատճառներով բավական մշուշոտ են: Համաձայն պաշտոնական Թբիլիսիի հայտարարության, ինքնավարությունն ունի մոտ $50մլն սպառազինություն, այդ թվում՝ զենիթային հրթիռային համակարգեր, ուղղաթիռներ, 4 «Т-72» տանկ և այլն: Փաստորեն Աբաշիձեի հսկողության տակ է գտնվում նաև Վրաստանի ՊՆ 25-րդ բրիգադը (հրամանատար՝ գեներալ-մայոր Ռոման Դումբաձե): Այդ բրիգադի կազմում կա 557 զինծառայող, 9 զրահամեքենա, հրետանային համակարգեր:

Ըստ տարբեր աղբյուրների՝ հիշատակվում է նաև 10-16 հազար զինյալների մասին, որոնք պատրաստ են Աջարիայի կողմից մասնակցել զինված գործողությունների: Հակասական տվյալներ կան ռուսաստանյան բանակի գեներալ-լեյտենանտ Յու.Նետկաչևի վերաբերյալ, որն, ըստ որոշ վարկածների, գլխավորում է աջարական հատուկ նշանակության զինված ստորաբաժանումները:

Աղբյուրներ և գրականություն

1. Тер-Арутюнянц Г., «Тбилиси и бывшие автономии» - Голос Армении, #10, 05.02.2004
2. Акопян В., Кивирян А., «Тбилиси - Аджария: корни конфликта», Новости России, ИА REGNUM, 25.03.2004
3. «Партия Аслана Абашидзе не пойдет на выборы президента Грузии», Lenta.ru; 25.11.2003
4. «Битва за Аджарию, Vip.Lenta.Ru: 10.02. 2004
5. Бараташвили Г., «Аджарцы сказали «КМАРЕ»: «Довольно!», GazetaSNG, 21.01.2004
6. «Грузия испытывает встряску от прихода демократии», "The New York Times", inosmi.ru, 14.01.2004
7. «Грузинский спецназ разогнал митинг торговцев у Госканцелярии»» Lenta.ru: КАВКАЗ: 01.02.2004
8. Симонян Ю., «Вернул украденное – и на свободу», Независимая Газета, #68 (3183) 5.04. 2004
9. «В Телави попытались поджечь офис «Кмара»», Gruzia2004\Bojkot Sabotazh Incident\BatumiNews_com
10. Страны и регионы мира 2003: Экономико-политический справочник, с. 47-54, Изд-во «Проспект», 2003
11. «Экономическая причина грузинского кризиса», Adzaria Statia\Финансы@MAIL_RU.htm, 16.03.2004
12. Транспортный Бизнес Северо-Запада России [Simple]; htm C:\WINDOWS\Desktop\PortBatum Нефтеотдача; Транспорт Черноморского региона: Морские порты, Transport Banner Network; http://news.pobeda.ru:8080/index.jsp?idtop=505;
13. Симонян Ю., «Саакашвили берет под контроль «хлебные места» Аджарии», Независимая Газета, #69 (3184), 6.04.2004 г.
14. Kasaev A., The Russian Interests of the Caucasus and the Situation around Iraq. Caucasus 2003: Changes to Continuty, International Conferece, Yerevan, April 15-16, 2004

15. Коноплев С., «Черное море стало регионом, имеющим геополитическое значение», Washington ProFile, #40 (402), 17.04. 2004
16. «Грузия обещала обеспечить российским военным базам нормальную жизнь»; Lenta.ru: КАВКАЗ: http://lenta.ru/vojna/2004/03/31/base/
17. «Россия, США и Грузия спорят о выводе войск», News.bbc.co.uk./russian, 13.01.2004
18. Коэн А., «Наши задачи в Грузии», "The Washington Times", inosmi.ru, 15.01. 2004.
19. «Ястржембский: Грузия была и остается проходным двором для террористов», Lenta.ru: В РОССИИ: 24.12.2003
20. «Российский и американский спонсоры делят Грузию», Izwestia.ru Политика, 31.03.2004
21. «США против сделки Грузии с Газпромом», News.bbc.co.uk./russian, 6.06.2003
22. «Посол США в Грузии возмущен затягиванием процесса подсчета голосов», volia.com. 05.11.2003
23. Тер-Арутюнянц Г., «Грузия во мгле», Голос Армении, #24.11.2003
24. Տերտերյան Գ., «Վրաստան. ներքին և արտաքին գործոններ», Հանրապետական, #9, 2003
25. «К власти в Грузии пришло лобби Джорджа Сороса», Lenta.ru: КАВКАЗ: 16.02.2004,
26. Հարությունյան Գ., «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում», Երևան, «Բավիղ», 2003
27. Панарин И., Панарина Л., «Информационная война и мир», с.44, М.: «ОЛМА-ПРЕСС», 2003
28. Тертерян О., «Задачи «бархатных революций» второго поколения», Голос Армении, # 30.11.2003
29. «Влияние грузинской революции на регион», Радио Свобода, 05.12.2003
30. «Новые консерваторы используют старые идеи», Washington ProFile, #134 (358), 24.12.2003
31. Пионтковский А., «Неоконсерваторы и неочекисты», Новая газета, 12.01.2004
32. Бланк С., «США должны воспользоваться плодами грузинской революции», The National Interest, inosmi.ru, 05.12. 2003
33. Мурадян И., «О политической динамике в регионе Южного Каваказа», «21 Век», #3, 2004
34. Храбрый О., «Ликвидаторы автономии», Эксперт, #13(414), 2004
35. Волк А., «Кому с США жить хорошо», GazetaSNG, 26.02.2004
36. «Колин Пауэлл: Партнерские отношения: работа продолжается», Izwestia.ru, В мире, 1.02.2004
37. Feith D.J., “Transforming the U.S. Global Posture”, CSIS, 03.12.2003
38. «Пентагон Интернешнл», Washington ProFile, #32 (394), 31. 03.2004

39. Тер-Арутюнянц Г., «Холодная война-2», Голос Армении, #139, 09.12.2003
40. Майданс С., ««Бархатная революция» создает для Грузии опасный прецедент», "The New York Times", inosmi.ru, 08.01.2004
41. «Грузинская армия приведена в боевую готовность, воздушное пространство закрыто», Lenta.ru: КАВКАЗ: 2004.03.15
42. «Саакашвили ввел санкции против Аджарии, Лужков прилетел его спасать» izwestia.ru, 16.03. 2004
43. «Саакашвили снимает блокаду с Аджарии», Lenta.ru: КАВКАЗ: 18.03.2004
44. «Россия перебрасывает спецназ в Аджарию», Lenta.ru: 11.02.2004; «Генерал-лейтенант Юрий Неткачев не является служащим российской армии. ИА "Новости-Грузия»18.03.2004.
45. Договор между Россией и Турцией 16 марта 1921 года; Карсский Договор 13 октября 1921 года, Ереван, 1991
46. «США призывают все стороны конфликта в Грузии воздержаться от силовых действий», Вашингтонский файл Офиса международных информационных программ Госдепартамента США, 16.03.2004
47. «Администрация США предупреждает правительство Грузии». BatumiNews.com: 14.03. 2004
48. «Посол США в Грузии не знает, что делать с кризисом в Аджарии», Day.Az,17.03. 2004
49. Laughland J., “Georgia on their mind” , The Guardian, April 1, 2004
50. «Генсек Совета Европы проинформировал Абашидзе об условиях властей Грузии для снятия экономических санкций», Day.Az,18.03. 2004
51. «США и ОБСЕ приветствуют договоренность по ситуации в Аджарии», Вашингтонский файл международных информационных программ Госдепартамента США, 22.03.2004
52. Мурадян И. «Проблемы безопасности в ближне-восточной политике США», Антарес, Ереван, 2003
53. Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, Академия гуманитарных исследований, 2002
54. Гаджиев К., Геополитика Кавказа, Москва, международные отношения, 2003
55. «Турция за неделю», Новости России - ИА REGNUM, 23.03.2004
56. Кулиев Н., «Зачем воскресили мертвеца? Россия и Турция вспомнили про Карсский договор», NovoyevremyaAZ, 03.18. 2004
57. Вооруженные силы стран мира, Изд-во «Попурри», Минск 2002, стр. 94
58. Арутюнян Д., «Армия для спецопераций?» - Голос Армении, #26, 16.03.2004
59. Богданов В., «В Сухуми готовятся к блокаде и курортному сезону, Глава правительства Абхазии Рауль Хаджимба дал интервью корреспонденту РГ» , Российская газета, 30.01.2004
60. «Мятежный грузинский генерал перешел в подчинение Абашидзе», Lenta.ru: КАВКАЗ: 19.04.2004

61. «Грузинский спецназ отказался воевать против Аджарии», Izwestia.ru, 6. 04. 2004
62. «Саакашвили пока не решил судьбу батумской бригады Минобороны Грузии», NewsInfo 12.04.2004

Ապրիլի 20, 2004թ.

"АДЖАРСКИЙ КРИЗИС" В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Гагик Арутюнян

Резюме

Обострение отношений между Тбилиси и Батуми в марте 2004г., получившее название "Аджарского кризиса", было объективным следствием той политической и экономической ситуации, которая сложилась в Грузии после смены власти осенью 2003г. Дестабилизируя ситуацию, руководству Грузии удалось добиться от лидера Аджарии Аслана Абашидзе ряда уступок экономического и политического характера. Вместе с тем остался нерешенным важный вопрос о разоружении аджарских вооруженных формирований. Автономия сохранила свою самостоятельность. Как следствие, противостояние между Грузией и ее автономией приняло перманентный характер. Подобным ситуациям присуща нестабильность, поэтому возможность вооруженного конфликта остается, основные развития впереди.

Вместе с тем "Аджарский кризис" был в немалой степени обусловлен той геополитической конкуренцией, которая имеет место в регионе между Россией и США. Поведение этих стран в дни кризиса было многоплановыми и дает основания для различного рода комментариев. Выглядит обоснованным предположение, что на данном этапе обе стороны, исходя из разных тактических предпосылок, не были заинтересованы в перерастании противостояния в вооруженный конфликт. В стратегической перспективе итоги такого конфликта трудно предсказуемы, так как в него могут быть вовлечены и другие геополитические игроки региона.

Следует отметить, что по ходу кризиса “Аджарская проблема” была в определенной степени интернационализирована и перестала быть исключительно внутренним вопросом Грузии. В околоконфликтной ситуации принимали активное участие не только Россия и США, но и Турция и структуры ЕС. Характерно, что каждая из этих сторон по-своему воспринимала и представляла решение “Аджарского кризиса”. Примечательно, что Турция, будучи ближайшим стртегическим партнером США, высказала свои претензии по отношению к Аджарии, продемонстрировав тем самым позицию, которая, на наш взгляд, принципиально отличалась от подходов США. В качестве дипломатического инструментария со стороны Турции был использован Карсский договор от 1921г., согласно которому Турция является гарантом Аджарской автономии. Такая политика Турции во многом сходна с той, которая имеет место по отношению к Иракскому Курдистану, где интересы США и Турции также вступили в противоречие. Обращает на себя внимание и двусмысленную политику Азербайджана в дни кризиса. Не исключено, что Турция и Азербайджан имеют согласованную линию поведения по отношению к “Аджарской проблеме”.